



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
Էլփոստ՝ info@aybschool.am
Կայք՝ www.aybschool.am

Գերմաներենի ուսուցիչ

«Այբ» տարրական, միջին և ավագ դպրոցներ

Երկարաժամկետ

Թբիլիսյան խճ. 11/11, Երևան, Հայաստան

Դիմումների ընդունման վերջնաժամկետ՝ **հունիսի 5**

Մասնագիտական և անձնային պահանջներ

Մեզ կարող են դիմել **բոլոր այն ուսուցիչները**, ովքեր՝

- ունեն լեզվաբանության, մանկավարժության (օտար լեզուների դասավանդում), հաղորդակցման մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում.
- տիրապետում են գերմաներենի հաղորդակցական հմտություններին (գրավոր և բանավոր)՝ առնվազն C1 մակարդակին (CEFR) համապատասխան.
- ունեն հիմնավոր գիտելիքներ դասավանդվող առարկայից, ինչպես նաև մանկավարժական և տեխնոլոգիական գիտելիքներ՝ դասավանդման ընթացքում դրանք տեղին և բավարար ծավալով կիրառելու համար.
- ունեն ուսումնական հաստատությունում տարբեր տարիքային խմբերի թե՛ 8-12 և թե՛ 13-16 տարեկան սովորողներին դասավանդելու փորձկրթությանը վերաբերվում են ոչ միայն որպես անձ ձևավորելու, այլ նաև Հայաստանի ապագան կերտելու գրավական.
- ուսուցչական առաքելությունն իրականացնելիս դրսևորում են ճանաչողական բազմակողմանիություն, ստեղծագործական և վերլուծական մտածելակերպ, հուզական զսպվածություն, հոգատարություն և պատասխանատվություն.
- դասավանդման հմտությունները կատարելագործելու համար մասնակցում են թե՛ ներդպրոցական, թե՛ արտադպրոցական ուսումնագործնական համայնքների աշխատանքներին և այլ մասնագիտական ձևաչափերով միջոցառումների, հետևում են մասնագիտական և մանկավարժական նորարարություններին ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանում.
- տիրապետում են իրենց աշխատանքի համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերին (օր.՝ Microsoft Office և այլն).

- ունեն ժամանակի կառավարման հմտություններ:

Դիմելու կարգ

Բոլոր թեկնածուներին խնդրում ենք vacancy@aybschool.am էլ. հասցեին ուղարկել՝

1. ինքնակենսագրություն (CV),
2. Նամակ-հիմնավորում «Ինչու եմ ուզում դառնալ ուսուցիչ «Այբ» դպրոցում» թեմայով (մեկ էջից ոչ ավելի),
3. դասավանդման, դասարանի հետ աշխատանքի վերաբերյալ սեփական մոտեցումների ու առաջնահերթությունների **հակիրճ** ներկայացում (նշված ձևաչափերից որևէ մեկով՝ MS Word, Power Point, Adobe PDF, Flash, Video և այլն):

Փաստաթղթերը կարող եք ուղարկել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն: Նամակի բովանդակության տողում նշեք պաշտոնի անունը՝ **German Teacher**:

Հայտերն ընդունվում են մինչև 2019 թ. հունիսի 5-ը ներառյալ: Ընտրված թեկնածուների հետ կապ կհաստատենք անձամբ՝ ընտրության հետագա փուլերը քննարկելու նպատակով: Խնդրում ենք չզանգահարել մեզ:

Կազմակերպության մասին

«Այբ» դպրոցը բյուրեղացումն է հայ դպրության լավագույն ավանդույթների և համաշխարհային կրթության բարձրագույն նվաճումների: «Այբ»-ը սովորելու մշակութաստեղծ նոր միջավայր է, ուր ազգային հենքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման:

«Այբ» դպրոցը ծնվել է կրթության դարաշրջանում, անընդհատ և արագորեն վերափոխվող աշխարհում ուսյալ, սեփական ակունքներին հաղորդ և ապագայի պատասխանատվություն ստանձնող սերունդ ձևավորելու անհրաժեշտությունից: «Այբ»-ը ծնվել է 21-րդ դարում՝ նպատակ ունենալով դառնալ 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի միջավայր: